

**Լեհական փոխառությունները Կամենիցի¹
դատական արձանագրություններում և նրանց
արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ**

Անահիտ Ազարյան

Հանգուցային բառեր. փոխառություն, պաշտոնանուն, իրավական հարաբերություններ, փոխատու լեզու, տառադարձման օրինաչափություններ, բաղաձայնական համակարգ, նորակերտ հարադրություններ

Նախաբան

Պատմաբան Վ. Ռ. Գրիգորյանի աշխատասիրությամբ 1963 թ. լույս տեսած «Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVIդ.)» ուսումնասիրությունը² հետաքրքիր նյութեր է տալիս Արևելյան Եվրոպայի հայկական ամենախոշոր գաղթավայրերից մեկի՝ Կամենեց-Պոդոլսկի հայ բնակչության իրավական, հանրատնտեսական և մասամբ էլ քաղաքական կացության վերաբերյալ³:

Ուսումնասիրելով դատական արձանագրությունների բառապաշարը՝ իբրև տվյալ ժամանակաշրջանի իրականության արտացոլում, առանձնացրել ենք փոխառությունները:

Ուսումնասիրության համար սկզբնաղբյուր են ծառայել վերոնշյալ

¹ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի նախնական անվանումներից մեկն է, որը հավանաբար կիրառվել է 9-րդ դարից սկսած:

² Կամենեց-Պոդոլսկում ստեղծված բազմաթիվ ձեռագիր մատյանները, որոնց մի մասը այժմ պահվում է Լենինգրադում, կարևոր սկզբնաղբյուր են ոչ միայն Պոդոլյեի, այլև ողջ Լեհաստանի, Ուկրաինայի և Ռումինիայի պատմության համար: Նրանցում հատկապես մեծաթեք են կամենիցյան տարեգրությունները, որոնք բաղկացած են մի քանի ժամանակագրություններից [4, 20]:

³ Դժվար է պատասխանել այն հարցին՝ երբ են հայերը հաստատվել Պոդոլյեի կենտրոն Կամենիցում: Ցարդ պարզված չէ անգամ Կամենիցի հիմնադրման հստակ ժամանակը: Հայտնի է, որ հայերի հաստատվելուց շատ կարճ ժամանակ անց այդ քաղաքը դառնում է Եվրոպայի հայկական խոշորագույն գաղթավայրերից մեկը. տեղի հայ գաղութը ազգաբնակչության թվով գերազանցում էր անգամ Լվովին:

Այս հանգամանքով պայմանավորված՝ Կամենիցում ստեղծված բազմաթիվ ձեռագիր մատյանները կարևոր սկզբնաղբյուր են ամբողջ տարածաշրջանի լեզվական իրողությունների ուսումնասիրման տեսանկյունից:

դատարանի 369 արձանագրությունների լեհական փոխառությունները⁴:

Անդրադառնալով մեր կողմից հետազոտվելիք թեմային՝ Ս. Ղազարյանը գրել է. «... հայ և եվրոպական ժողովուրդների միջև ստեղծված հարաբերությունները և սելջուկյան, մոնղոլական ու թուրքական արշավանքներն ու տիրապետությունը Հայաստանում բազմաթիվ նոր բառերի առաջացման ու տարածման անհրաժեշտության պահանջ են դնում՝ հարստացնելով միջին հայերենի բառապաշարը, թեև փոխառված բառերի զգալի մասը չի արմատանում հայոց հետագա շրջանի գրավոր լեզվի մեջ» [5, 276-277]:

Ուսումնասիրված դատական 369 արձանագրություններում ամենից հաճախադեպը լեհական փոխառություններն են⁵: Դա պայմանավորված է նրանով, որ թեև Կամենիցում գոյություն է ունեցել երեք ինքնավարություն՝ լեհական, ուկրաինական և հայկական, այնուամենայնիվ այդ հանգամանքը նպաստում էր արդեն իսկ գոյություն ունեցող ինքնավարությունների լեզուների փոխներթափանցումներին: Կամենիցի հայությունը, համեմատած լեհահայ մյուս գաղութների հետ, ուշ ձուլվեց [4, 39]: Դրա հիմքում, իհարկե, հայկական գաղութի թե՛ լեզվական, թե՛ մշակութային և թե՛ իրավական համակարգերի հարաբերական անկախությունն էր:

Աշխատանքում նպատակ է հետապնդվում ներկայացնելու հայոց լեզվի զարգացման այդ փուլին բնորոշ բառային իրողությունները՝ ելնելով պատմահամեմատական և մակաձման (ինդուկտիվ) մեթոդներից, այն է՝ մասնավոր դատողությունների հիման վրա եզրահանգելով ընդհանուրի վերաբերյալ:

Դատական արձանագրությունների լեհական փոխառությունները

Օտար բառերի փոխառությունների ներթափանցումը լեզվի որևէ շրջափուլ տեղի է ունենում կա՛մ ժողովուրդների անմիջական շփման, կա՛մ էլ ստեղծված տարատեսակ մշակութային շփումների միջոցով: Այս դեպքում մենք գործ ունենք ժողովուրդների անմիջական շփմամբ միջին

⁴ Հիշյալ փոխառությունների մեծ մասի հետագա գործածությունը առաջին հերթին պետք է պայմանավորել ոչ թե լեհական ազդեցությամբ, այլ ավելի ուշ ժամանակաշրջանում ռուսերենի ազդեցությամբ:

⁵ Փաստական նյութի, եզրահանգումների, դատողությունների և միջինհայերենյան փոխառությունների քննության համար ուսումնասիրել ենք «Միջին հայերենի բառարան»-ը, հարկ եղած դեպքում օգտվել «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», «Հայերեն արմատական բառարան», «Հայերեն բացատրական բառարան» և «Հայոց լեզվի բարբառային բառարան» աշխատություններից:

հայերեն ներթափանցած լեհական ծագում ունեցող օտարամուտ⁶ բառերի հետ⁷, որոնք ներկայացնում են հետևյալ հիմնական իմաստային դաշտերը.

1. **Պաշտոնանուններ՝** *բան* (pan) «պարոն», *շլախեդնիյ* (szlachcic) «մանր կալվածատեր», *ուրեատնիք* (urzednik) «ոստիկան», *պուրմիսդր* (burmistrz) «քաղաքագլուխ», *ռայդցա* (redca) «խորհրդական», *սդարօսդայ* (starosta) «վարչական գործերի կառավարիչ», *վոյթ* (wojt) «գավառապետ», *վոյվոսայ* (wojewoda) «քաղաքացիական բարձր պաշտոնյա», *տեքուդայ* (deputat) «պատգամավոր», *իհիսար* (pisarz) «գրագիր», *քուօրնիք* (komornik) «դատական կատարածու»:

2. **Չափի, արժեքի միավորներ, հարկ, տուրք՝** *բունչնա* // *բունցնա* (հին լեհերեն) «գործը լսելու համար դատական տուրք», *բամեդնիյ* (հին լեհերեն) «դատական տուրք», *զադեկ* (zadatek) «առգին», *լոքոլ* (lokiec) «երկարության չափ՝ արմնկաչափ», *հրիւնայ* (grzywna) «դրամական միավոր», *հրուշ* // *հրոշ* (grosz) «գրոշ», *մոնիդայ* (moneta) «դրամ», *ռայթայ* (rata) «մուծման վճար», *սուսայ* (suma) «դրամ»:

3. **Մասնագիտություն, արհեստ՝** *բրինցիբալ* (pryncypał) «տեր», *կոշքար* (հին լեհերեն) «սայլապան», *միրոջնիք* (mlynarczyk) «ջրաղացպան», *մուժիք* (macznik) «ջրաղացպան», *շաֆար* (szafarz) «մատանապետ», *ֆուրման* (furman) «կառապան»:

4. **Կենցաղ, տնտեսություն՝** *բասքա* // *բասիքա* (pasieka) «մեղվափեթակ», *բրիսդաւքայ* (przystawka) «աղցանաման», *եամարք* (jarmark) «տոնավաճառ», *մադագին* (magazyn) «խանութ», *պեչքայ* // *բեչքայ* (beczka) «տակառ», *սդեքայ* (stepka) «նկուղ», *սդրդայ* (sterta) «դեզ», *սդոլ* (stol) «սեղան», *պոտնեա* «ճամպրուկ», *բամեն* (kamien) «կշռաքար», *քուխնայ* (kuchnia) «խոհանոց», *քոփցա* (kopica) «դեզ», *ուպրոսու* (obrus) «սփռոց», *քուօրայ* (komora) «փոքր սենյակ», *քորչմա* (karczma) «պանդոկ», *ֆորմայ* (forma) «կաղապար»:

⁶ Բնորոշումը Մ. Մուրադյանինն է. «Միջին հայերենում պատկառելի չափերի են հասնում օտարամուտ բառերը, որոնց գլխավոր աղբյուրներն են արաբերենը, պարսկերենը, հունարենը, իտալերենը, ֆրանսերենը, թուրքերենը, ինչպես և ասորերենը, վրացերենը» [1, 197]:

⁷ Պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ թեև տվյալ փոխառությունները, ըստ միջին հայերենի բառարանի, լեհական ծագում ունեն, սակայն բոլոր այդ բառերի որևէ փոխատու լեզվի պատկանելությունը այնքան էլ միանշանակ չէ, հետևաբար հարկ ենք համարում նշել նաև դրանց պայմանականության մասին:

5. **Իրավական հարաբերություններ՝** *արեւացիա* (apelacja) «վճռաբեկ գանգատ», *արեստ* (areszt) «կալանք», *բլենի բոդենդ* (plenipotent) «լիազորված անձ», *բրիվիլեյ* (przywilej) «արտոնություն», *գազնայ* (kazn) «բանտ», *զաբիս* (zapis) «պարտամուրհակ», *ինվենդար* (inwentarz) «գույք», *մահարիչնիք* // *մահրիչնիք* «վկա», *մինութայ* (minuta) «դատավճռի քաղվածք», *ռաթայ* (rata) «մուծում», *ռաթուշ* (ratusz) «բանտ», *սդարուդ* (statut) «կանոնադրություն», *ստոուշ* // *սոտուշ* // *ստուուշ* «անձնավորություն, որից գնված է վիճելի առարկան», *տեքրեդ* // *տեգրեթ* (dekret) «վճիռ», *տիլեցիա* (dyłacja) «ժամկետի երկարաձգում», *տուվոտ* (dowod) «ապացույց», *ուոզլատ* (dokładka) «հավելում», *ուուոցովանըյ* (umocowanie)⁸ «լիազորված», *ուվեազանեյ* (uwięzienie) «կալանք», *փրոքուրադոր* (procurator) «դատախաղ»:

6. **Հագուստ, կտորեղեն, զարդեր՝** *լանցուխ* (łańcuch) «շղթա», *հաչքա* (haczyk) «ճարմանդ», *սփոնքայ* // *զբոնքայ* (zaponka) «ճարմանդ», *ատամաշքա* (adamaszek) «կտորի տեսակ», *բլախոթ* (plachta) «քարանտե մեծ թաշկինակ», *սնոր* (sznur) «երիզ», *քիրի* (kir) «սև մահուդ», *քոլփաք* (kolpak) «գլխադիր»:

7. **Գործիքներ, զենքեր՝** *հագովնիցայ* (hakownica) «հրացան», *շապլա* (szabla) «թուր», *քրեքա* // *քրոքա* (krocica) «ատրճանակ»:

8. **Զգայական ընկալումներ՝** *բիւէ* (biba) «հարբեցողություն», *կվալդ* (gwalt) «աղմուկ»:

9. **Հասարակական հարաբերություններ՝** *նազլատ* (nakład) «ծախս», *շթուքայ* (sztuka) «հատ»:

10. **Կենդանանուն՝** *եալուվիցամըյ* (jalowizna) «ստերջ կով»:

Ըստ խոսքիմասային պատկանելության՝ լեհական փոխառությունները հիմնականում գոյականներ են:

Իմաստային դաշտերի բազմազանությունը վկայում է փոխառությունների պատկանելի չափերի մասին, որոնք, ինչպես նկատելի է հասկանալի է, արդյունք են հասարակական, քաղաքական մի իրավիճակի, որն ուղեկցել է հայ ժողովրդի մի հատվածին իր կյանքի մի որոշակի փուլում:

Փոխառությունների առանձնահատկությունն այն է, որ նրանք մեծ

⁸ Սույն բառը լեհերենում կիրառվում է բայանուն-գոյականի արժեքով, հետևաբար բնականոն է փոխառության՝ հայերենում՝ համապատասխան հիշյալ արձանագրությունների մեջ հարակատար դերբայով կիրառությունը, ինչպես՝ «Ի յայս աւուր դատաստանին առջեւն եկաւ Սարգիս մանտաւաք եւ կանկատ առաւ Միլքոյին վերայ, որ է ումոցովանըյ խաչուէն կնոջէ ...»:

մասամբ ժամանակավոր բնույթ չեն կրում: Ի տարբերություն այն տեսակետի, որ փոխառությունները ժամանակավոր բնույթ են կրում, «... փոխառյալ բառերի մեծագույն մասը գործածվում է այնքան ժամանակ, որքան որ ստում է փոխատու լեզվով խոսողների տիրապետությունը» [2, 516], այնքան էլ չի վերագրվում մեր կողմից ուսումնասիրվող փոխառություններին:

Ստորև մենք կուսումնասիրենք լեհահայոց արձանագրությունների այն փոխառությունները, որոնք առկա են ոչ միայն լեհահայոց խոսվածքում, այլև արևելահայոց մեջ: Պատահական չէ, որ ն՝ գաղթահայերը, ն՝ բնիկ հայերը նույն կարգի փոխառություններ են կատարել, փոխառություններ, որոնք արտացոլում էին մեզնում չեղող երևույթներ: Մի մասի համար դրանք դիտարկվել են որպես հիմնական բառապաշարի տարրեր, իսկ մյուս մասի համար՝ փոխառություն. իզուր չէ, որ Է. Ադայանը հետևյալ կերպ է բնութագրել փոխառությունները. «ժամանակավոր բնույթ են կրում լեզվի պատմության մեջ ու մեծ մասամբ չեն մերվում նրա բառային կազմին, մանավանդ հիմնական բառաֆոնդին, նրանք նաև զգալի դեր չեն կատարում լեզվի զարգացման պրոցեսում և, առհասարակ, ազդեցություն չեն գործում լեզվի վրա» [2, 517]:

Փոխառությունները գեղարվեստական գրականության մեջ

1. *Եամմարթ* («տոնավաճառ») փոխառությունը, որոշակի փոփոխությունների ենթարկված, մինչև օրս էլ բավականին կիրառելի է արևելահայ ժողովրդախոսակցական լեզվում: Նշենք կիրառության օրինակ՝ *Ինչպես յայտնի է Եարմրկա կոչւած տեղում առնտուր անող մանրավաճառները գործադու էին արել տեղերի գինը թանգացնելու համար* (Մամուլ): Տվյալ օրինակում այս փոխառությանը վերագրվել է տեղանիշ հատուկ անվան իմաստ:

1.1. Թիֆլիսի բարբառում այս փոխառությունը հետաքրքիր փոփոխությունների է ենթարկվել՝ վերածվելով *յարմունկա*-ի⁹: Օրինակ՝ ***Ցարմունկումը բատինկեք առա*** (ԳՍ):

1.2. *Եամմարթ* փոխառությունը Նոր Նախիջևանի բարբառում կիրառվում է *յամուրթ* տարբերակով:

2. *Մուժիք* («ջրադացպան») ¹⁰ միջինհայերենյան փոխառությունը

⁹ Ունի նաև *Ցարմուկա* ձևը. երկու ձևերն էլ գործածական են միայն արևմտահայոց մոտ, ինչպես՝ *Քյընրմա յարմուկա, էտ տրեռնայիս մըթեն ա ընգնրմ, քյնրմ ա համին էտ տոնը դոնաղ ընգընրմ* (ԳՍ):

¹⁰ Խարբերողի բարբառում *մուժիկ* նշանակում է «մշուշ, մառախուղ»:

ժամանակակից հայերենում ենթադրաբար իմաստի նորացման է ենթարկվել, այսինքն՝ նախկին իմաստը մոռացվել է, և բառը գործածվում է միայն նոր իմաստով: Ներկայումս *մուժիք* գոյականին վերագրվել է «ռուս գյուղացի, գեղջուկ» իմաստը¹¹, ինչպես՝ *Էս ժամանակ էր ահա, որ հյուսիսի դաշտերում Երկաթակամ ու համառ մի նոր մուժիկ էրնաց* (ԵԶ): *Խնդրե՛մ, մտեք, – Ներեցե՛ք ... երկու մուժիկ՝ դռներում* (ՊՍ): *Նույն ժամուն մի մուժիկ, բարձած սայլակով, տարածամ քաղաքը ներս էր բերում յուր ագարակային բերքը* (Բ): – *Էի-է՛խ, մուժի կ: Սուժիկին հարկավոր է – մի գույգ կոշիկ* (ԵԶ):

3. *Պէչքայ // բէչքայ* («տակառ»)՝¹² փոխառությունը, պահպանելով նախնական իմաստը և հնչյունական որոշակի փոփոխությունների ենթարկվելով, կիրառություն է գտել նաև հայ գրականության դասականների ստեղծագործություններում: Բերենք գործածության մի քանի օրինակ՝ *Գոտիկը, ինչպես բոշկի կապը, մեջքովն ոլորած, դուրս թռավ* (ԽԱ): *Մի բոչկա ջուրը, խնայելով, խմում ենք երկու օր. օրական մի բակլաշկա ոնց որ ուղտին գդալով ջրես* (ՍԶ): – *Ողջույն Մյունյաց սպարապետին, – բղավում է Բոչկա Ջախարը կանացի ձայնով, որ անբնական է նրա հաստ մարմնի համար* (ԱԲ): *Իսկ հայտնի պոնդոկապետ Բոչկա Նիկոլայը, նա, որ հանրամատչելի դուխան է պահում Լորիս Մելիքյան փողոցի վրա* (ԵԶ):

Վերջին օրինակներում արդեն առկա է անձին երկրորդաբար տրվող, նրա գիրության հատկանիշը բնութագրող, մականուն դարձած հատուկ անուն:

4. *Սդոլ* («սեղան»)՝¹³ բառը ևս, թերևս հետագայում ռուսերենի ազդեցությամբ փոխանցվելով ժամանակակից արևելահայերենի խոսակցական բառապաշարին, լայն գործածություն է գտել, ինչպես՝ *Գնում իս տունը վիր գրում. Երկու կոտրած սկամի, մե հին ստոլ ու մե քանի ային-*

¹¹ *Մուժիկ* գոյականը ռուսերենում ունի հետևյալ իմաստները. 1) գյուղացի, 2) տղամարդ, 3) տղամարդ՝ ամուսին, 4) աշխատակից՝ դժվար, կեղտոտ աշխատանք կատարող: Հետևաբար կարող ենք որոշակիորեն փաստել, որ բառը հայերենին է անցել հենց ռուսերենի միջոցով՝ առանց իմաստային որոշակի փոփոխությունների:

¹² Բառն առավել տարածված է Արարատյան, Ջավախքի բարբառներում: Ղարաբաղի բարբառում բառը ունի *պոժկա* կազմությունը, ինչպես՝ *Տերտակ պոժկան պեցուր ծեն կրհանե՛* «Դատարկազուխ մարդտ մեծախոտ է լինում, ոչինչ չարժեցողը շատ է աղմկում՝ իրեն թմբկահարում»:

¹³ Բառը տարածված է *Թբիլիսիի, Ղարաբաղի, Մեղրիի, Կարինի* բարբառներում:

օյին բանիր իս գտնում (Բ): Մոտիկ կանգնածներն իրար երեսի են նայում՝ «կամաց, ախպերացու, **ստողը** կջարդես» (ՋԴ):

5. Փխսար («գրագիր») փոխառությունը նույնպես, պահպանելով իր նախնական նշանակությունը, կիրառություն է գտել հայ դասականների ստեղծագործություններում, ինչպես՝ – *Հո ղեղը չափից ավելի չե՞ք լցրել – հարցրեց նա **պխսար**¹⁴ Արշավիրի միջոցով* (ՎԱ): *Վեր ես կենում մեր դեմ խոսում. Այդպես **պխսեր** մենք չենք ուզում* (ՀԹ):

6. *Հրուշ // հրոշ* («գրոշ») արժեքի միավորը (իրականում՝ ռուսական փոխառություն) ժամանակակից հայերենում ենթարկվել է բաղաձայնական փոփոխության և լայն կիրառություն գտել, ինչպես՝ *Նա ձեռքը պարզեց, որ տա ինձ մի քանի **գրոշ*** (Բ): *Քանի՞ **գրոշ** արժե մի դրություն, որ հին իմաստասերը բանաձևել է այս խոսքով. «Ես միայն մի բան գիտեմ, այն՝ որ ոչինչ չգիտեմ»* (Ն-Դ):

6.1. *Գրոշ* փոխառությունը դարձվածակազմության մեջ ևս կենսունակ է: Ժամանակակից հայերենում ունենք *գրոշի համար հոգի(ն) տալ, սև գրոշ, գրոշի արժեք չտալ, գրոշի արժեք (չ)ունենալ, գրոշ չարժենալ* և այլ դարձվածքներ՝ հիմնված բառի՝ «չնչին, անարժեք բան» փոխաբերական իմաստի վրա: Օրինակ՝ *Գրոշի արժեք չուներ այդ հարցը, մի ինչ-որ քաղաք գրավելու ժամանակամիջոցը սխալ գուշակելու խնդիրը* (ԵԶ): *Էս դադա փողիք է մխսիլ տայի ինձ, յիս, վուր մե **գրոշի համար հոքի իմ տայի*** (ԳՄ):

7. *Տէրուդադ* («պատգամավոր») փոխառությունը հայերենին անցել է կրկին ռուսերենի միջոցով: Այն ժողովրդախոսակցական բառապաշարի ակտիվ շերտի բառ է եղել և է, անգամ երբեմն իր արտացոլումն է գտել նաև գրական ստեղծագործություններում, ինչպես՝ – *Մ. Մ., եթե չես մոռացել, խնդրում եմ չանտեսես **դեպուտատ** յինելուդ մասին* (ՀՄ): *Ասում է, այ տղերք, էդ մարդը հո **դեպուտատ** չի* (ՊԶ):

8. *Մաղազին* («խանութ») փոխառությունը հայ դասականների ստեղծագործություններում հանդիպում է և՛ իր նախնական տարբերակով, և՛ բաղաձայնական որոշակի փոփոխությամբ, ինչպես՝ *Այ **մաղազին** չը մնաց չըմտնանք, ալ պեան չմնաց – չառնի* (ԱՇ): *Մենք ման էինք ածում մեզ հետ մի ամբողջ շարժական **մազազին*** (Բ): *Ճոթի **մաղազայում** վառվում էր մի ճրագ* (ԱԲ): Այս փոխառությունը ևս ռուսական ազդեցության հետևանք է:

8.1. Նույն *մաղազա* տարբերակը Խոտուրջուրի, Ուրմիայի, Վանի,

¹⁴ Հատկանշական է, որ այս և հաջորդ գեղարվեստական փոխաբերության մեջ փոխառությունը հնչյունափոխվել է. տեղի է ունենում շնչեղ խուլ-խուլ անցում:

Գանձակի բարբառներում ունեցել է «գետնափոր նկուղ, մառան» մասնավոր իմաստը, ինչպես՝ *Մաղագաներում ... պահվում են գենք ու զինամթերք* (ԳՄ):

9. *Վոյթ* («զավառապետ») պաշտոնանունը 20-րդ դարասկզբին դեռևս գործածական էր, ինչի վկայությունը մամուլից բերված հետևյալ օրինակն է՝ *Նրանց ցուցակը նախագան էր կազմում և ամեն տարի ս. Մատթեոսի նախատոնակին «հաւատատար մարդկանց» հետ միասին սկսում էին ընտրել վոյթ և նրա համար օգնական* (Նոր Դար, 28.08.1901, 135):

10. *Ֆորմայ* («կաղապար») փոխառությունը հայ դասականներից Ստեփան Զորյանի բառապաշարի բավականին գործուն բառերից է, օրինակ՝ *Ազգային ֆորմա – դա, իհարկե, միայն լեզուն չէ* (ՍԶ): *Մեր անցյալի պրոզայիկները՝ սկսած Աբովյանից մինչև Նար-Ղոս, ստեղծել են պրոզա իրենց ժամանակի ազգային ֆորմայով, մի ֆորմա, որ այսօր ակտուալ չի, իհարկե* (ՍԶ):

11. *Ֆուրման* («կառապան») փոխառությունից է հավանաբար առաջացել *Ֆուրման* անձնանունը, որի հիմքում ընկած է գերմանական *Fuhrman* բառը, որը նշանակում է «սայլապան» և ածանցված է *fahren*՝ «ընթանալ, փոխադրամիջոցով տանել» նշանակությամբ բայից: Լեհական այս փոխառությունն էլ պետք է որ փոխառված լինի գերմաներենից, այսինքն՝ այս դեպքում այն միջնորդավորված փոխառություն է: Այս ամենը մեկ անգամ ևս փաստում է՝ ոչ մի դեպքում ոչ մի լեզու կատարելապես անկախ ու անջատ չէ մյուսներից» [3, 28]:

Փոխառությունների հնչափոխական և տառադարձման տիպերը

Կամենիցյան արձանագրությունների լեհական փոխառությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս միջինհայերենյան բառերի հնչափոխության տառադարձման որոշակի օրինաչափություններ բացահայտել.

1. Լեհական **ja** հնչյունակապակցությունը՝

- Բառասկզբում *jarmark>եամարք*, *jalowizna>եալովիցամարյ* փոխառություններում ենթարկվել է **ja>եա** փոփոխության:
- Բառավերջում *apelacja>աբելացիա*, *dylacja>տիլեցիա* փոխառություններում ենթարկվել է **ja>իա** փոփոխության:

2. **Ie** հնչյունակապակցությունը՝

- Բառամիջում *kamien>քամեն* փոխառության մեջ ենթարկվել է **ie>ե** փոփոխության. տեղի է ունեցել երկբարբառի պարզեցում:
- Բառամիջում *lokiec>լօբօզ* փոխառության մեջ ենթարկվել է **ie>օ** (**աւ**) տառադարձման:

- Բառամիջում *pasieka*>*բասիքա* բառում ենթարկվել է **ie>ի** փոփոխության. տեղի է ունեցել երկբարբառի պարզեցում:
- Բառավերջում հետևյալ փոխառություններում՝ *umocowanie*>*ումոցովանըյ*, *uwieźnienie*>*ուվեազանեայ* ենթարկվել է մի դեպքում **ie>ը**, իսկ մյուս դեպքում՝ **ie>եա** փոփոխության:

3. **Aw** հնչյունակապակցությունը *przystawka*>*բրիսդալքայ* բառում ենթարկվել է **aw>աւ** փոփոխության:

4. **Yw**-ը *grzywna*>*հրիւնայ* փոխառության մեջ կրել է **yw>իւ** փոփոխություն:

5. **Oj** երկբարբառը միջինհայերենյան *wojt*>*վոյթ*, *wojewoda*>*վոյվոսայ* պաշտոնանուն-փոխառություններում կրել է **oj>ոյ** փոփոխությունը:

6. **E** ձայնավորը՝

- *Urzednik*>*ուրեասնիք* փոխառությունը փաստում է **e>եա** տառադարձման մասին. այս դեպքում տեղի է ունեցել պարզ ձայնավորի երկբարբառացում:
- *Redca*>*նայդցա* օրինակում առկա է **e>այ** փոփոխություն. տեղի է ունեցել պարզ ձայնավորի երկբարբառացում:
- *Deputat*>*տեբուդաթ*, *beczka*>*բեչքայ*, *apelacja*>*աբեչազիա*, *inwentarz*>*ինվենդար*, *dekret*>*տեգրեթ* փոխառություններում տեղի է ունեցել **e>է** տառադարձում:
- *Stepka*>*սդեքքայ*, *areszt*>*արեստ*, *plenipotent*>*բլեննի բոդենդ* օրինակներում հանդիպում է **e>ե** տառադարձումը:
- *Moneta*>*մոնիդայ* դեպքում առկա է **e>ի** տեղաշարժը:
- *Sterta*>*սդրդայ* փոխառությունը հետաքրքրական է, քանի որ բառամիջում տեղի է ունեցել **e>(ը)** տառադարձումը:

Վերոնշյալ փոխառությունների քննությունը հնարավորություն է տալիս նաև որոշակիորեն գաղափար կազմելու լեհական փոխառությունների՝ բաղաձայնական համակարգերի տարբերակների պատկանելության վերաբերյալ: Քննության շնորհիվ պարզ է դառնում.

1. Բառապաշարային տվյալ շերտին առավել տիպական է կլիկյան եռաստիճան բաղաձայնական համակարգը, որտեղ ձայնեղ հպականները դարձել են խուլեր, խուլերը՝ ձայնեղներ, իսկ շնչեղ խուլերը մնացել են անփոփոխ: Այսպես՝ *pan*>*բան*, *urzednik*>*ուրեասնիք*, *starosta*>*սդարոսդայ*, *deputat*>*տեբուդաթ*, *pryncypał*>*բրինցիքայ*, *naklad*>*նազլատ*, *pasieka*>*բասիքա*, *przystawka*>*բրիսդալքայ*, *sterta*>*սդրդայ*, *stol*>*սդոյ*, *dowod*>*տովոս*, *hakownica*>*հազովնիցայ* և այլն:

2. *Redca>նայդցա* և *zadatek>զադան* փոխառություններում հանդիպում է նաև բաղաձայնական համակարգի մեկ այլ տարբերակ: Եռաստիճան անտեղաշարժ բաղաձայնական համակարգի վկայությունն են այս փոխառությունները, որտեղ ձայնեղների, խուլերի և շնչեղ խուլերի շարքերը պահպանվել են անփոփոխ:

3. *Zaponka>զբօնքայ* և *zadatek>զադան* բառերում բառասկզբի ձայնեղ բաղաձայնը մնացել է նույնը. *zaponka>զբօնքայ* փոխառության դեպքում տեղի են ունեցել խուլ>ձայնեղ և խուլ>շնչեղ խուլ տեղաշարժերը: Սա էլ բնորոշ է միջին հայերենի բաղաձայնական համակարգի մեկ այլ տարբերակի, որտեղ խուլ հպականները կարող էին արտահայտվել կա՛մ հին խուլերն¹⁵ արտահայտող *պ, կ, տ, ծ, ճ* տառերով, երբ այդ շարքը մնացած լինե՛ր անփոփոխ, կա՛մ հին ձայնեղներն արտահայտող *բ, գ, դ, ձ, ջ* տառերով, երբ դրանցով արտահայտված հնչյունները տեղաշարժված լինե՛ին խուլերի [1, 112]:

Այս ամենից գատ՝ նկատելի է, որ հետևյալ փոխառություններին տիպական են նաև խուլ – շնչեղ խուլ տեղաշարժերը, ինչպես՝ *urzednik>ուրեատնիք, wojt>վոյթ, komornik>բօմօրնիք, rata>նայթայ, jarmark>եառնաթք, kuchnia>քուխնայ, karczma>քորչմա, minuta>մինույթայ* և այլն:

Քննվող արձանագրությունների լեհական փոխառությունները հետաքրքրական են նաև նրանով, որ բայական փոխառությունների համակարգում ունենք նորակերտ հարադրություններ կամ խառը տիպի նորակազմություններ: Այս տիպի նորակազմությունների անվանական բաղադրիչը լեհական գոյականական փոխառություն է, իսկ բայական բաղադրիչը՝ միջինհայերենյան բառային միավոր: Նմանատիպ կապակցություններ են՝ *արեստ առնել* (*areszt*) «կալանք դնել», *արելովադ // արելովադ առնել* (*apelować*) «բողոքարկել», *իսդիկովադ առնել* (*instygować*) «դատական գործ հարուցել», *կվալդ առնել // կվալդովադ առնել* (*gwaltować*) «բռնություն գործադրել», *օսոչավադ առնել // սոչովադ առնուլ*¹⁶ (*szacować*) «զնահատել»:

Մեզ հանդիպած բոլոր այս նորակազմություններում որպես բայական բաղադրիչ բացառապես հանդես է գալիս ներգործական սեռի *առնել* բայը:

¹⁵ Հին հայերենում պայմանականորեն առանձնացնում ենք եռաստիճան բաղաձայնական համակարգ, որտեղ հին խուլերի շարքը մի դեպքում մնացել է անփոփոխ, մեկ այլ դեպքում փոխվել է հակառակ ուղղությամբ՝ ձայնեղների *պ>բ, կ>գ, տ>ճ* և այլն:

¹⁶ Սա գրաբարյան *առնուլ* բայը չէ:

Եզրակացություն

Ուսումնասիրելով դատական վերոնշյալ 369 արձանագրությունները՝ կարծում ենք, որ թեև վերոբերյալ փոխառությունները, ըստ միջին հայերենի բառարանի, ունեն լեհական ծագում, սակայն հիշյալ բառերի՝ լեհերենին պատկանելությունը այնքան էլ միանշանակ չէ. որոշ դեպքերում գործ ունենք միջնորդավորված փոխառությունների հետ: Լեհական փոխառությունների գերակշռող մեծամասնությունը գոյական է, իսկ իմաստային-թեմատիկ դաշտերի բազմազանությունը վկայում է փոխառությունների պատկառելի չափերի մասին, որոնք արդյունք են քաղաքական և հասարակական մի իրավիճակի, որը լեհահայությանն ուղեկցել է միջինհայերենյան ժամանակահատվածում:

Աշխարհագրական ծագումնաբանությամբ անմիօրինակ բնակչություն է եղել Կամենիցում: Տարբեր բարբառակիր հայերի առկայության մասին են փաստում հնչյունական զուգաձևությունները, ինչպես՝ *պէջքայ // բէջքայ, հրուշ // հրոշ, բունոչնա // բունոցնա, սոտուշ // սոտուշ // սոտուչ, տեքրեդ // տեգրեթ* և այլն:

Ինչպես ընդհանրապես փոխառությունների, այնպես էլ մեր առանձնացրածների յուրահատկությունն այն է, որ մնայուն բնույթ են կրում: Դրանց զգալի մասը մինչ օրս էլ կիրառելի է, այն էլ ոչ թե, օրինակ, Արդեալի բարբառում կամ լեհահայերի որոշ խոսվածքներում, այլ արևելահայ բարբառներում (որոշ դեպքերում՝ անգամ արևմտահայոց մոտ), ժողովրդախոսակցական լեզվում և դրանցից բաղադրված գեղարվեստական փոխաբերություններում՝ տեղ գտնելով հայ դասականների գործերում և մամուլի էջերում ու բավականին կենսունակորեն կիրառվելով դարձվածակազմության բնագավառում:

Լեհական փոխառությունների քննությունը թույլ է տալիս գաղափար կազմել նաև կամենիցահայության կատարած փոխառությունների՝ միջին հայերենին բնորոշ բաղաձայնական համակարգերի այս կամ այն տարբերակի առկայության մասին, որը միաժամանակ հավաստում է գաղթահայերի՝ տարբեր բարբառակիրներ լինելու հանգամանքը: Քննությամբ պարզ է դառնում, որ կամենիցահայության խոսվածքում առավել տիպականը կիլիկյան եռաստիճան բաղաձայնական համակարգն է՝ ձայնեղ հպականներից դեպի խուլ, խուլերից՝ ձայնեղ անցումներով և շնչեղ խուլերի անփոփոխությամբ: Նույն այդ փոխառությունների ուսումնասիրությունը հետաքրքրական է նաև նրանով, որ փոխառությունների համակարգում կան նորակերտ բայական հարադրություններ, որոնք համալրում են

միջին հայերենի խառը տիպի փոխառությունների շարքը, և որոնց անվանական բաղադրիչը գոյականական փոխառություն է, իսկ բայական բաղադրիչը՝ բնիկ հայերեն բայ:

Գրականություն

1. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1972, 496 էջ:
2. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Երևան, «Միտք» հրատարակչություն, 1967, 638 էջ:
3. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, I մաս, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1940, 356 էջ:
4. Գրիգորյան Վ., Կամենեց-պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1963, 440 էջ:
5. Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1981, 402 էջ:

Համառոտագրություններ

- ԱԲ** – Ակսել Բակունց
ԱՇ – Ալեքսանդր Շիրվանզադե
ԳՄ – Գուրգեն Մահարի
ԳՍ – Գաբրիել Սունդուկյան
ԵԶ – Եղիշե Չարենց
ԶԴ – Զարգանդ Դարյան
ԽԱ – Խաչատուր Աբովյան
ՀՄ – Հրանտ Մաթևոսյան
Ն-Դ – Նար-Դոս
ՊԱ – Պարույր Սևակ
ՊԶ – Պերճ Զեյթունցյան
ՍԶ – Ստեփան Զորյան
ՎԱ – Վախթանգ Անանյան
Բ – Բաֆֆի

Польские заимствования в судебных протоколах Каменницы и их выражение в художественной литературе

Анаит Азарян

Резюме

Ключевые слова: заимствование, официальный, правовые отношения, язык заимствования, закономерности транслитерации, консонантная система, новые сочетания

Изучив 369 протоколов армянского суда города Каменца-Подольска, мы пришли к тому выводу, что вышеназванные заимствования, по среднеармянскому словарю, имеют польское происхождение, однако польская принадлежность указанных слов не очень однозначна: в некоторых случаях имеем дело с опосредованными заимствованиями. Подавляющее большинство польских заимствований - существительные, а многообразие семантико-тематических полей свидетельствует о значительном размере заимствований, которые являются результатом такой политической и общественной ситуации, которая сопровождала польских армян в среднеармянский период.

Особенностью выделенных нами заимствований, как и всех остальных, является их постоянный характер. Большинство из них употребляются и сегодня, однако не только, например, в словаре Арделя или некоторых говорах польских армян, но и в западноармянских словарях (в некоторых случаях и у восточных армян), разговорной речи и составных от них художественных произведениях, находя место в произведениях армянских классиков и на страницах прессы, довольно активно используются также в области перевода.

Изучение польских заимствований позволяет составить мнение о заимствованиях, сделанных каменницкими армянами, о наличии в них типичной среднеармянскому того или иного варианта консонантной системы, которая одновременно свидетельствует о том, что армяне-колонисты были носителями разных диалектов. В результате исследования становится ясно, что в говорах каменницких армян наиболее типичным является киликийская трехступенчатая консонантная система - с переходами от звонких смычных к глухим, от глухих - к звонким и неизменностью придыхательных глухих.

Исследование этих же заимствований интересно тем, что в системе заимствований существуют новые глагольные сочетания, которые пополняют ряд заимствований смешанного типа среднеармянского языка, именем компонентом которых является номинативное заимствование, а глагольный компонент - исконно армянский глагол.

Polish Loanwords in Court Records of Kamentes and their Expression in Fiction

Anahit Azaryan

Summary

Key words: *loanword, official name, legal relations, lending language, spelling patterns, consonant system, newly formed relations*

Examining the 369 protocols of the Armenian court in the city of Kamenets-Podolsk, we tend to think that the loanwords, according to the Middle Armenian dictionary, are of Polish origin, but the belonging of the mentioned words to the Polish language is not so clear. In some cases, we deal with intermediate loans. The vast majority of Polish loanwords are nouns, and the variety of semantic-thematic fields testifies to the considerable amount of loanwords, which are the result of a political and social situation that accompanied the Polish-Armenians during the Middle Armenian period.

The peculiarity of both the loanwords in general and those separated by us is that they are of a permanent nature. Most of them are still applicable today, not in the Ardal dialect or some dialects of Polish-Armenians, but in Eastern Armenian dialects (in some cases even among Western Armenian), in the colloquial language, in their artistic metaphors, in the works of Armenian classics, in the press and applied vigorously in the field of translation.

The examination of Polish loanwords allows us to form an idea about the existence of this or that version of the consonant systems typical of Middle Armenian, which at the same time confirms the fact that the Armenian colonists were the speakers of different dialects. As a result of the examination, it becomes clear that the most typical in the dialects of the Armenians of Kamentes is the three-level philetic system of Cilicia, from vocal touches to deaf, from deaf with vocal transitions, with the immutability of breathing deaf.

The study of the same loanwords is interesting in that there are newly formed verb conjunctions in the loan system, which complement the series of Middle Armenian mixed-type loanwords, the nominal component of which is a noun loan, and the verb component is a native Armenian verb.

Ներկայացվել է 15.10.2021 թ.

Գրախոսվել է 20.10.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.